ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016թ.-ի հունվար-հուլիս ամիսների ընթացքում թողարկվել է 7.9 մլն դրամի (ընթացիկ գներով) *արդյունաբերական արտադրանք*, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 1.2%-ը : 2016թ.-ի հունվար-հուլիս ամիսների ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 87.4%: Մասնավորապես հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արդյունաբերական աճի տեմպը կազմել է 15.9%, մշակող արդյունաբերությանը՝ 81.9%, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 104.8%, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակմանը՝ 120.1% :

Վայոց ձորի մարզում գրանցված են 69 արտադրական և 249 առևտրային ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են «Ջերմուկ Գրուպ» ԲԲԸ, «Ջերմուկի մայր գործարան» ԲԲԸ, Եղեգնաձորի պահածոների գործարանը, «Ռաֆել Գրիգ» ՍՊԸ, «Գետնատուն» ՍՊԸ, «Գետափի գինու գործարան» ՍՊԸ, «Վայք Գրուպ» ՓԲԸ:

2016թ.-ին մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է 3770 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է 1590 մարդ, իսկ առևտրի և սպասարկման՝ շուրջ 2180 մարդ:

Մարզում գործարարության աշխուժացման նպատակով բազմակողման համագործակցության հուշագիր է ստորագրվել Իրանի իսլամական Հանրապետության ՈՒրմիա նահանգի, ՌԴ Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի /մասնավորապես 2015-2017թթ համագործակցությանծրագիրը/, Բելոռուսիայի հանրապետության Մինսկի մարզի և ՀՀ Վայոց ձորի մարզի ղեկավարության միջև:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզի 1200 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 44 համայնքներում: Ժամանակագրական առումով դրանք ներկայացնում են մեր թվարկությունից առաջ 4-րդ հազարամյակից մինչև 20-րդ դարն ընկած հատվածը: Բազաթիվ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի առկայությունը, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը,

էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, Ջերմուկի առողջարանի և հանգստյան գոտու ճանաչվածությունը և ձմեռային զբոսաշրջության համար նրա կարողությունները մարզը դարձրել են զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա չորս եղանակների համար: Այժմ զբոսաշրջության ձևերի մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ: Պասիվ հանգստի ձևերից անցում է կատարվում դեպի ավելի ակտիվ ձևերը: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ. անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

Մարզում գործում են բազմաթիվ ժամանցի վայրեր, հիսունից ավելի առողջարաններ և հյուրանեցներ, 32 մշտական և 47 սեզոնային սննդի օբյեկտներ, 81 տնային հյուրանոցներ, 6 գինու համտեսի սրահներ: Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: 2016 թվականի առաջին 6 ամիսների ընթացքում զբոսաշրջիկների թիվը հասել է 8000-ի: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Դրանով է պայմանավորված ՌԴ-ում զբոսաշրժությամբ զբաղվող հայ գործարարների խոշոր ներդրումները Ջերմուկ քաղաքում, մասնավորապես ”Ջերսան” հյուրանոց ջրաբուժարանի կառուցումը և Ջերմուկ քաղաքի “Ռեզորդ” առողջարանի կառուցումը: Ընդհանուր անմամբ Ջերմուկ քաղաքում գործում է 8 առողջարան, 12 հյուրանոցներ և շուրջ 25 հյուրատներ: Ամբողջը միասին կազմում է 1420 մահճակալ/օր: